# 91 Երբ մերժես շարունակ Տերոջ հրավերն անուշ,

1. Երբ մերժես շարունակ Տերոջ հրավերն անուշ,
Կուգա կետ մը, ուր ձայնն Սուրբ Հոգվոյն
Քեզ չըլլար լսելի ամբոխին մեջ մոլի,
Հաշվի առի՞ր (2) զայս դուն:

> Հաշվեցի՞ր գինն ահեղ քո հոգվոյ կորստյան,
> Հոգ չէ, թե շահիս աշխարհ համայն,
> Ճիշտ հիմա, թերևս, դուն հասած ես այն կետին,
> Կուզե՞ս հաշվել (2) մեծ գինն:

2. Փոխարեն հանդերձյալ առավոտյան պայծառ
Կարելի է ընտրել քեզ փայլուն,
Հաճույքներն մեղքի սին, որ մեկեն կանհետին,
Հաշվի առի՞ր (2) զայս դուն:

3. Քանի որ դուռն Անոր ողորմության է բաց
Եվ անհուն սերն ալ չէ սպառած,
Բժշկվիլ չե՞ս ուզեր, փսփսալով. «Ա՛ռ զիս, Տե՛ր,
Հաշվի առի (2) մեծ գինն»: